



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՎՐԱՅԻ ՊՐԵՄԻԱՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ա. ՇԱԽԱԳԻՆ



# ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԶՏԱԿՆԵՐ

---

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ 1933 ՅԵՐԵՎԱՆ



Պրոլետարիատը բալոր յերկիրթերի, միացե՛ք

3кп3

## Ա. ՀԿԻՐՁԱԾՈՎ



# ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԶՏՄԱՆ ՇՈՒՐՋԵ

Հյաւահասային Կովկասի կաւազամակերպության նմերի գտնան մի ժամկ համբազումաբները



Դլավլիտ 7745 (Բ), Հրատ. № 111  
Պատվեր 1306, Տէրաժ 3000  
Պետհրատի տպարան  
Խմբ. Ա. Հախումյան, տեխ. Խմբ. Մ. Եֆրիմ:  
Արքագրիչ՝ Լ. Արովյան

Հյուսիսալին Կովկասի գյուղատնտեսական շրջանների կուսկազմակերպությունների գտման դասերը քաղաքական և գառտիարակչական ահագին նշանակություն ունեն: Հյուսիսային Կովկասում կատարվող գտման հիման վրա կարելի յեւ անել վորոշ յեղբակացություններ կուսակցության բոլոր անդամների և թեկնածուների գտման մեթոդների և լեզանակների վերաբերմամբ, իսկ գտմանը մենք ձիուարկելու յենք առաջիկայում՝ Համելումկումի (բ) Կենակումի գեկտեմբերի 10-ի վորոշման հիման վրա:

Գտման յեղբակացություններն առաջմ վերաբերում են յերկրի գյուղական կազմակերպությունների մի չորրորդ մասին միայն, իսկ յեղած թվական տվյալները վերաբերում են լոկ ստուգվածների մի փոքր մասին: Այնուամենայնիվ այդ տվյալները շատ բնորոշ են գնահատելու համար Հյուսիսային Կովկասի գյուղատնտեսական շրջանների կուսկազմակերպությունների աշխատանքը:

Մեր քերած տվյալներում պարզաբանվում են զբանական հիմնական հարցերը, ինչպես նրանք ներկայացվում են ըստ Կենակումի և ԿՎՀ-ի հանձնաժողովի նյութերի, վորը ղեկավարում եր գտման ընթացքը Հյուսիսային Կովկասում: Նախ և առաջ զտումը ցույց է տալիս մեզ, թե ինչպիսի կամունիքաների ենտ հարկ յեղավ գործ ունենալ գյուղում, ինչ զեմք ունեն կուսկացությունից վտարվածները: Յերկրորդ, զտումը

ցույց տվեց, թե ինչ մերսդների լեն դիմել մեղ խորթ  
և թշնամական տարրերը կռւառկցության շարքերի մեջ  
մուտք գործելու համար: Յերրորդ, զուումը ցույց տվեց,  
թե օրանային կազմակերպություններն ինչպես են դե-  
կտվարում բջիջները և ճանաչում են արդյոք ստորին  
գյուղական ակտիվը: Վերջապես մենք ուզում ենք հա-  
ղորդել զտման առաջին քայլերի փորձը, ցույց տալ  
այն արգելքները և թերությունները, վորին հանգի-  
պում ենք զտման ընթացքում, և դնել այն հարցը,  
թե կուսակցական կողմակերպությունները փոշափակ են  
հաօվի առնում զտման ամբողջ կարեվորությունը լին հօա-  
նակուրյունը, ամբացնում նրա արդյունքները:



Այժմ Հյուսիսային Կովկասում զտումը կատարվում  
է նուրանի 17 դյուզատնտեսական շրջաններում: Աշ-  
խատում են 56 ստուդիչ հանձնաժողովներ, վորոնց  
մասնակցում են 168 ընկերներ, սրանց մոտ կեսը՝ կու-  
սակցության անդամներ, արտադրական բանվորներ են:

Կուրանի այդ 17 շրջանների բջիջներում արդեն  
ստուգված ե 1276 կոմելնիստ, այս թվում 613 թեկ-  
նածու: Հեռացված ե 396 հոգի, կամ բոլոր ստուգ-  
ված կոմունիստների ընդհանուր թվի 30,8 տոկոսը:  
Առանձին-առանձին ըստ բջիջների հեռացված են՝ կու-  
տնտեսություններում 768 հոգաւց 253, ՄՏԿ մեջ 146  
հոգուց 26, իորհանտեսություններում 52-ից 9: Ըստ  
կուսատաժի հեռացվածների հիմնական մասսան կազ-  
մում են կուսակցության անդամները 1930—1931 թվից  
և թեկնածուները:

Կուսակցությունից վտարված «ակտիվիստների» մեջ  
զգալի թիվ հն կազմում նըանք, վորոնք միացել ելին  
կուլակության հետ կամ թե ուղղակի պատկանում են  
մեզ թշնամի բանակին. Արժագիրի շրջանում նույնիսկ  
շրջանային պատասխանատու աշխատանքում գտնվեց  
Նախկին սպիտակեների մի ամբողջ ծաղկափունջ: Շրջ.  
ՎՀՀ—ԲԴՏ փոխնախադահ Ստարչենովը յեղել և հին բա-  
նակի սպա, իրքե կամավոր ծառայել և Բուլակ Բալա-  
խովիչի ջոկատում վորպիս շտաբակապիտան: Գերի յե  
մնացել Լենաստանում, հետո ծառայել և Պետլյուբայի  
մոտ, այնուհետև անցել է կարմիրների կողմքը Նախկին  
սպիտակ-դվարդիականները մուտք ելին գործել նույն-  
իսկ կուսակցության շրջկոմի մեջ: Շրջկոմի անդամ  
Բոլղիրեը ծառայելիս և յեղել Կալչակի մոտ, մասնակ-  
ցել է կարմիր բանակի գեմ մզված կոփմներին: Քաղ-  
կոմանտեսության վարիչ՝ կուսակցության անդամ Կու-  
տինը խօսոր նավատերի վորդի լե: 1917 թ. ավարտել  
և խորունծիների (կազակ սպա) դոլրոցը գետման Սկո-  
րոպաղակու մոտ, լեզիլ և գայդամակների ջոկատում:  
Հետո ընկել և պարտիզանական մի ջոկատ և այնտե-  
ղից նարմիր բանակի շարքերը Մասնակցել և խոր-  
հըրդային իշխանության գեմ կաղմակենցպված դավա-  
դրության, անցել և սպիտակեների կողմը, ծառայել և  
սպայական գնդերում: Սպիտակեների շախճախումից հե-  
տո մնացել և կրամնողարում և ոչճճնատուք և յեղել  
վորպիս շարքային դինվոր: Նույն 1920 թ. մտել և  
կուսակցության մեջ, թաղցնելով իր անցրալը:

Կուրդանսկի շրջանում զտումը մերկացրեց Պետ-  
րոպավլովսկի կուսկոմի քարտուղար Դալմատովին  
(կուսակցության անդամ 1926 թից, շրջկոմի անդամ):

Կուռակցության մեջ մտնելիս նա թագցվել է, վոր աղյուսի գործարանատիրոջ վորդի լի: Թայքայել և կուտնատեսության ըջինները: Ծածկել ե աշխակապությունը, մասնավորապես «Վասիլով սոլնցա» կոլտնատեսության մեջ, վոր տպորինի կերպով ստացել և 14 հազար ռուբ. ապահովագրական դրամ իրը թե ամբողջապես փչացած աշնանացանի համար: Յեկ պատահական չե, վոր ստանիցալում տապալվել և հացամթերութեանի պլանը, իսկ ցանքը կատարված և միայն կիսով չափ:

Զաման հանձնաժողովները հայտաբերեցին կուսակցական շարքերի մեջ ինձողում՝ խորթ տարրերով և ուղորտունիստներով կոլտնատեսական և այլ գյուղական բջիջներում:

Կրասնոդարի 2րջանի Մարզանսկայա ստանիցայի խորհրդի Նախագործությունը Գոնդարը լեզել և սպիտակ բանդաների ակտիվ մասնակից 1918—1920 թ. թ., կուսակցության մեջ և մտել վորպես թեկնածու 1931 թ.: Աշխատելով գյուղինորհրդում, նաև սժանդակել և կուլակալին ստրոտածին և կոլտնատեսությունների քայլացանը, թույլ ե տվել, վոր սատկեն 400 ձի: Մինչև ձմեռը հավաքված չի յեղել լեզիալտոցը բենքերի կեսը:

«Կրասնի կուբաննեց» (Նեղամակեվսկայա ստանիցա) կոլտնատեսության բջիջի ղեկավարությունը գտնվում էր կուլակալին, մնասաբարաբական տարրերի ձեռքում: Վարչության անդամները՝ բջիջի քարտուղար Կեղոլի, ղլխավորությամբ՝ իրենց աշխատանքում անց եցին կացնում կուլակալին դիմ: Բրիգադիրներ, պահեստապեաներ են նշանակվել կուլակներ: Նրանց ղեկա-

վարությամբ հափշտակված ե լեղել լեզիպտացորենի  
ըերբի սու կեսը:

Նովոռաժդեստվենսկալա ստանիցայի բջիջում կու-  
սակցության անդամ Պավլենկոն, նախկին կուլակ,  
վորը զավթել ե կարմիր բանտկի նահանջելուց հետո  
Կուրանում մնացած կարմիր-բանակայինների ընտա-  
նիքների դուլքը, կարողացել ե դառնալ վարչության  
անդամ և Կրասնի բալեցա կոլտնտեսության բանջա-  
րահոցի վարիչ: Նա իրեն ոգնականներ եր վերցրել  
բացառապես նախկին կուլակներից և առևտրական-  
ներից:

Շատ կուսկազմակերպություններ չեն կարողացել  
հակառակ կուլակալին տարբերի դիմադրությանը և  
կուլակալին ոզգեցությանը կոլտնտեսականների ա-  
ռաջավոր մասի հասարակական կարծիքի կազմակերպ-  
ված ուժը: Դա հեշտացրել ե կուլակության քալքալիչ  
աշխատանքը:

Դրա համար ել պատռհական չի, վոր գլուղական  
կոմունիստների վորոշ մասը հեռացված ե կուսակցու-  
թյունից հացի դողությանը ու վատնմանը աջակցելու  
կամ անտարբեր վերաբերմունք ունենալու համար:

Պավլովսկի շրջանի Ռւմանսկայա ստ. կարլ Մարք-  
սի անվան կոմունալի բջիջի քարտուղար Ռւսատին՝  
բջիջի բյուրոյի և շարքային կոմունիստների լուռ հա-  
մաձայնությամբ՝ կատարել ե հացի մատուայական վատ-  
նում: Այսուեղ բացեիրաց բոլոր կոմունիստների աչքի  
առաջ հացը ծախում ելին հենց դաշտում, ջրաղացում  
կամ տանում եյին Ռւմանի շուկան:

Նովոռոսիամագլենսկայա ստանիցալում բջիջի քարտուղարը, միաժամանակ՝ «Կրտսենի ըայեց» կոլտնտեսության տնտեսավարը՝ Աշկասովը, կուսակցության անդամ 1930 թվից, գիտակցարար խառնել և հացի հաշվառումը մինչեւ այն աստիճան, վոր չեր կարելի ստուգել, թե ինչ քանակությամբ հաց ե յեկել ամբարները, ում և հաց տրվել։ Զնայած վոր կոլտնտեսականները մի քանի անգամ դիմել են նրան, հայտնելով, թե պահեստապետները գողանում են հացը, Աշկասովը ծածկել ե այդ խալտառակությունները։

Մարինսկայա ստանիցայի կոլտնտեսության նախագահ Շենեխովը, կուսակցության անդամ 1926 թ., հանցավոր անփութություն և հայտարերել կոլտնտեսության ղեկավարման գործում։ Կալսելիս ցորենի կեսը դնացել է դարձանի հիտ։

Զտման ժամանակ հայտաբերվեց, վոր կոմունիստներից վոմանք ուղղակի դավաճանել են կուսակցությանը, ինչպես և կոմունիստներից վոմանք տնցել են կուլակալին դիրքերը ազգակցական կապերի պատճառով։ Տարնովսկայա ստանիցայի բջիջում կար կուսակցության մի անդամ՝ Նաումենկո, նախկին բատրակը Յեղել և Կարմիր բանակում։ Լավ կոլտնտեսական եր Սակալին իր տիրոջ՝ ձայնադրուրկ կուլակի աղջկա հետ ամուսնալուց հետո դարձավ ուղղակի կուլակության ագենտ։ Լինելով կոլտնտեսության նախագահ, նա կարողացավ վերականգնել իր անեղոջ քաղաքացիական իրավունքները, ընդունեց նրան կոլտնտեսության մեջ վորսես ձիապան։ Դրա հետեանքը լեզավ այն վոր ձիերը սատկեցին։

Դեպի պարտականություններն անփռւյթ վերաբերմունք ունենալու, պաշտոնական դիրքն ի չարը գործ գնելու և այլ հանցանքների համար վտարված և 29 հոդի, ստորին աշխատանքից դասալիք լինելու համար՝ 14 հոդի:

Կուսակցությունը լերկաթե կարդապահության պահանջ և դնում, պահանջում և լուրաքանչյուր կոմունիստից ինքնազաստիարակություն։ Հեռացվածների ըավական դդալի մասը կտղմում են պասսիվ մարդիկ, կուսդիսցիպլինա խախտողները, նրանք, վորոնք չեն ցանկանում կատարել կուսակցական պարտականությունները և դրազվել ինքնակըթությամբ, չունեն վոչ մի կուսակցական ծանրաբեռնում։

Զառումը մի անգամ ևս ցուց տվեց, թե ինչ բացափիկ նշանակություն ունի գյուղի յերիտասարդ կոմունիստների մեջ տարվող աշխատանքը։ Նրանց ճնշող մասը կուսակցության մեջ և մտել վերջին տարիներս Արինակ, ստուգվածների կեսը կտղմում են թեկնածուները։

Փոխանակ դաստիարակելու յերիտասարդ կոմունիստներին, ծանոթացնելունը բարձեսկզմի հիմունքներին, կուսակցության ծրագրին և առկտիկացին, բջիջները բոլորովին չեն գրադվում նրանց հետ։ Շատ կուսկադմակերպություններ բարձիթողի լեն արել այս աշխատանքը, մոռանալով լենինի ցուցումները, վորոնաշարկում եր թեկնածուների վերաբերյալ հիստարեն կիրառել այնպիսի կանոններ, վարոնիք իրոք սամքը դարձեն լուրջ հննուրյուն, յեվ վոչ թե դատարկ ձեւականություն։

Ահա թե ինչու կուսակցությունից վտարվածների մեջ մեծ թիվ են կազմում բացարձակագործես անդրագետ, կուսակցական կյանքով չհետաքրքրվող մարդիկ։ Մի շարք բջիջներում նույնիսկ հաշվի չեր տռնվում, թե վորքանով կոմունիստները կատարում են կուսակցական և հասարակական տարրական պարտականությունները։

Կան փաստեր, յերբ թեկնածուները մեկ ու կետ տարվա ընթացքում չեն յեղել կուսակցական ժողովներին և չեն վճարել անդամակնարները, և վոչ վոքուշադրություն չի դարձրել դրա վրա, այնինչ այդ «մեռած հոգիները» նշանակված են յեղել բջիջի ցուցակում։

---

Ի՞նչ միջոցներով են մուտք գործում կուսակցության մեջ կուլակալին խորթ տարրերը։

Զտումը վկայում ե, վոր մի շարք բջիջներում ընկած են յեղել կուսակաղմը մեխանիկորեն ավելացնելու հետեւից։ Կուսակցության մեջ ընդունելիս ընդունվողները չեն յենթարկվել մանրակրկիտ ստուգման։ Զի պարզվել ընդունվողների դասակարգային դեմքը, նրանց անցլալը, իսկ յերաշխավորությունը համարվել ե պարզապես ձեականություն։ Կուսակցական կազմակերպությունները նկատի չեն ունեցել այն հանգամանքը, վոր Հյուսիսալին կովկասի պայմաններում կուսակցական շարքերի խճողման վտանգ կա։

Սպիտակ բանդաների, ջախջախսված կուլակության ամեն տեսակ բեկորները, պետապարատից զտվածները, ողտագործել են վորոշ կուսակցական կազմակերպու-

թլունների և առանձին կոմունիստների դասակարգացին աշալը ջութիւն թուլացումը:

Բացահայտ աջ ոպրտունիստների, ուղղակի և գիտակցաբար կուլակների ազդեցութիւն տակ ընկած ժարդկանց հետ միասին զտումը հայտաբերեց քաղաքականապես քիչ զարդացած կոմունիստների, վորոնք իրենց անգրագիտութիւննետնանքով չեն կարողացել դեմ կանգնել դասակարգալին թշնամու դավերին։ Նրանք ձեռները թափ եյին տալիս, յերբ զտման հանձնաժաղովները մտանանշում ելին մնը բացված կուլակներին, նախկին սպիտակ բանդիտներին, վորոնք նրանց հանցանքով խցկվել ելին կուսակցության մեջ և քայլայել կոլտնտեսությունը։

Թե ինչ հնարքների յեն դիմում մեզ խորթ մարդիկ, ձգանլով ընդունվել կուսակցության մօջ, այդ ցույց կատ հետեւալ որինակը։ Արմավիրի շրջանի Վազնեսենսկալա ստանիցայում կուլակ նիկիտինը նախ խցկեց «Սելսկի պախար» կոմունայի մեջ վորպես հաշվետարի աշակերտ, հետո իրեն ցույց տալով «տղնիկ աշխատող», որինակեցի պաշտոնյա, դարձավ հաշվետար։ Մի քանի ժամանակ անց նա դիմում և տալիս ընթիշին, վոր. իրեն ընդունեն կուսակցութիւնն մեջ։ Մինչ այդ նա բարեկամություն և հաստատում Ստալինի անվան հարեւան կոլտնտեսության բջիջի քարտուղարի հետ, խմացնում և նրան և ստանում և յերաշխավորություն։ Յերկրորդ յերաշխավորությունն ստանալու համար կուլակը գնում և «Բուդյոննի» կոլտնտեսութիւնն բջիջի քարտուղարի մոտ, այստեղ ել կիրառում և նույն մեթոդը, այսինքն խմացնում և ըմիջի քարտուղարին և վարչուղարին անդամներին։

կուլակը հասնում ե իր նպատակին. բջիջն ընդունում  
ե նրան վորպես թեկնածու, և միայն զտման ժամա-  
նակ նրան մերկացրին և վտարեցին:

Կան նաև փաստեր, լեռը կուսակցության մեջ խըս-  
կը ված խորթ մարդիկ հետո համախմբել են իրենց շուր-  
ջը ամսն տեսակ «Նախկինների», արտաքսված կու-  
լակների ընտանիքի անդամների «Բներ» և այլն։ Այս  
տեսակետից ուշագրավ ե «Պարեղա» կոլտնտեսության  
(Իվանովսկայա ստանիցա) բջիջի գործը։ Այստեղ  
բջիջից զտված ե 40 %-ը (52-ից 21-ը), այս թվում կոլ-  
տնտեսության և գլուղխորհրդի ամբողջ ղեկավա-  
րությունը։ Կուլակային խմբավորման ներշնչողը յե-  
ղել ե Լաստիճանի դպրոցի ուսուցչուհի Լեվչինակա-  
վալեվսկայան, կուսակցության անդամ 1928 թ.։ Սա  
կուսակցության մեջ մտնելիս թագցրել ե, վոր ինքը  
խոշոր անտառարդյունաբերողի աղջիկ ե։ Այս «ընտա-  
նիքի» բոլոր ազգականներն սպիտակ սպաներ են յե-  
ղել և պատժիչ ջոկատների մասնակիցներ։ Լեվչինակի  
յեղբարը նույն ճանապարհով մուտք ե գործել կոմյե-  
րիտմիության և կոլտնտեսության մեջ։ Նո դարձել եր  
կոմյերիտական բջիջի քարտուղար, ընդունվել կուսակ-  
ցության թեկնածու և 1932 թ. հաստատվել կուսակ-  
ցության անդամ։ Լեվչինների աջակցությամբ թունով  
կուլակային տարրերը թափանցում ելին վոչ միայն  
կոլտնտեսության, այլև կուսակցական ու կոմյերի-  
տական բջիջի մեջ։ Այս մարդիկ կազմակերպել ելին  
իրենց սեփական, կուլակային «ակտիվը»։ Լեվչինակ  
ԲԴՏ աջակցող խմբի ղեկավարն եր, ընթացք չեր տա-  
լիս աղնիվ կոլտնտեսականների դիմումներին, հովա-  
նավորելով կուլակներին։ Կոմյերիտական բջիջի քար-

տուղ սրբ հացամթերութիւնը ին աջակցող խմբեր եր ստեղծում կուլակների դագակներից, նրանց տուաշ եր քաշում աշխատանքի մեջ քորպիս ռակտիվիստներ։ Պարզ է, թե ինչ ռաջակցություն ելին ցույց տալիս այդ մարդիկ հացամթերութիւնը ին։

Ազնիվ կուլտնասականներին և կուսակցության լերիտասարդ անդամներից և թեկնածուներից շատերին հետ ելին քշում։

Այսպիս կուլակային շալկան տնօրինում եր կուլտնասության ամբողջ կյանքը, քայլալում եր կուլտնասական արտադրությունը, կազմակերպում եր հացամթերութիւնը սարոտած և այլն Իսկ սաանիցալի (գլուղի) կուսակցական և խորհրդալին որգանները մատը մատին չելին խփում։

#### ՀԱՅՈՒԹ

Կուլտնասակային շինաբարության կուսակցական զեկավարության խնդիրն ե, ի միջի ալլոց, ոգնել կուլտնասականների առաջավոր, ամենահեղափոխական մասին, վոր աղատազրվել և մասնավոր սեփականատիրական սովորություններից, պայքարելու հանուն կուլտնասությունների, հանուն աշխատանքային ամուր կարգապահության, հանուն սոցիալիստական սեփականության պահպանման, պայքարելու ընդողմ կուլակի, լողի, գոփողի և գոզի, և հենվելով կուլտնասականների արդ առաջավոր մասի վրա, առաջնորդել կուլտը և տեսական ամբողջ մասսան։

Այնինչ զտումը ցույց և տալիս, վոր մի շարք գեղեցիրում զրջանային կուսկաղմակերպությունները չեն

սովորել զեկավարել կոլտնտեսությունների և խորհություն-  
տեսությունների տնտեսությունը, չեն սովորել բայլ-  
շնիկորեն դաստիարակել կոլտնտեսականներին, իսկ  
հաճախ նրանց զեկավարությունը լեղել ե ձեւական,  
նրանք ծանոթ չեն լեղել իրենց գլուղական կաղըերին:

Այս հաստատվում ե բազմաթիվ փաստերով: Պավ-  
լովսկի շրջանի Ումանսկայա ստանիցալում Բուդյոն-  
նու անվան կոլտնտեսությունը վերջացնում եր հա-  
ցամթերումները, պլանը կատարելով 90% ։ Այդ  
ժամանակ յեգիպտացորենի արտում միներ լերեացին:  
Յեգիպտացորենը փրկելու համար կոլտնտեսության  
վարչությունը մարդիկ հանեց դաշտը լեգիպտացորենը  
քաղելու համար: Այդ պատճառով ժամանակավորապես  
պակասեց հացի փոխադրությունը: Շրջկոմի կազմբաժ-  
նի վարիչը և շրջգործկոմի նախագահը մեկնում են  
այդ կոլտնտեսությունը և առանց գործը քննելու ձեր-  
բակալում են կոլտնտեսության նախագահին և ստա-  
նիցալի խորհրդի նախագահին, դատի յեն հանձնում  
նրանց՝ հացը պետությունից թագցնելու և հացամթե-  
րումներին դիմադրելու մեղադրաւթյամբ: Այսպիսով  
նրանք ֆլամ հասցըին ալն կոլտնտեսությանը, վորը  
ամենքից լավ եր կատարել պետական առաջադրանքնե-  
րը: Իսկ ստանիցայի մյուս կոլտնտեսությունները, վո-  
րոնք իսկապես սարուածի ելին լենթարկել հացի  
հանձնումը և վատնել եցին հացը (ՄՊԳՎ անվան «Չեր-  
վոնոյ» պոլե», «Կավալովկ», «Կամինտերն» և այլն) մե-  
տին անձեռնմխելի:

Դեռ ավելին: Շատ զեկավարներ նույնիսկ չգիտե-  
ին իրենց գլուղական բջիջների թիվը: Պավլովսկի  
շրջկոմը չկարողացավ ճիշտ կերպով ասել, թե քանի

կոմունիստ կո ստանիցայում, լերը զտման հանձնաժողովը հարց տվեց նրան, Պարզվեց, վոր 170.-ի փոխարեն իրականում կո 200 կոմունիստ: Միաժամանակ հանձնաժողովին ներկայացրին ալիքիսիների հաշվառման քարտեր, վորոնք կազմակերպությունից դուրս են մնացել 2—3 տարի առաջ:

Զտումը միաժամանակ հայտաբերեց, վոր կուտնատեսային բջիջներից գոմանց կազմակերպական կոռուպցիանքը սխալ եւ բատ եյության շատ ստանիցաներում չկան կոլտնահսալին բջիջներ: Տիխորեցկի շրջանի Նեղամայևսկալա ստանիցալի կոլտնահսալին բջիջում 13 եռգուց միայն յերկուսը կոլտնատեսական են, մնացածները կցվածներ են: Կրասնոդարի շրջանի Դինսկայա ստանիցայում կոլտնատեսային բջիջների անդամների հիմնական մասսան կազմում են կոլտնատեսության հետ վոչ մի կապ չունեցող կցվածները: «Թակել սեվոյցուցի» կոլտնատեսության բջիջում թ կոմունիստներից միայն մեկը կոլտնատեսական եւ կոլտնատեսային բջիջների քարտուղարները մեծ մասամբ քաղաքականապես և կուլտուրապես անպատճաստ են: Քարտուղար են ընտրվել մարդիկ՝ առանց վորեն ստուգան, պատահականորեն: Եուենովսկի շրջանի Պլատոնովսկայա ստանիցայում լերկու դեպքում բջիջի քարտուղարները լեզել են կուտկցության թեկնածուներ:

Ստորին զեկավար կուտակցական ակտիվի խճողման փաստը նույնական վկայում ե, վոր շրջանացին կոմիտեները ծանոթ չեն լեզել գլուղի իրականության հետ: Առաջին համար կազմակերպել ամուր կոմիտեից:

Առաջնական մի քանի արդյունքների մասին, յենք գլխավոր շեշտը դրինք գյուղական կուսկազմակերպությունների դրության և նրանց զեկուավարման բացասական կողմերը լուսաբանելու վրա։ Սակայն այդ չի նշանակում, վոր բերված փաստերը տիպիկ են Հյուսիսային Կովկասի բոլոր գյուղական բջիջների համար։ Դրա համար ել միանգամայն սխալ կլիներ կարծել, թե Հյուսիսային Կովկասում չկան լավ, որինակելի գյուղական բջիջներ և գյուղական տոկուն կոմունիստներ։ Բերենք լավագույն բջիջների և կոմունիստների աշխատանքի միայն մի քանի որինակ։

Տիխորեցկի շրջանի Իրկվիչսկայա ստանիցայի կոմունալի բջիջը կարողացել է լավ ձեռվ կաղմակերպել մասսայական աշխատանքները։ Կոմունան միահամուն կերպով ժամանակին կատարում է իր պարագվորությունները պետության հանդեպ, հացամթերութերի պլանը գերակատարված է մի յերբորդականով։ Յերկույթերեց տարվա մեջ կոմունան դարձել է խոշոր, որին ակելի տնտեսություն։


Կաբենովսկայա շրջանի Պլաստունովսկայա ստանիցայում «Պաբեդա» կոլտնտեսության բջիջն իր շուրջը համախմբել է ամուր կոլտնտեսական ակտիվ, ճիշտ և դասավորել կուսակցական ուժերը։ Կոլտնտեսությունը հաջողությամբ կատարել է ցանքը և հացամթերումներն ըստ հանրապետական պլանի, գտնվելով համապայմաններում մլուս կոլտնտեսությունների հետ։

Զտումը հայտաբերեց նաև ազնիվ և կուսակցությանը նվիրված շատ կոմունիստների, վորոնք բարեխղճորեն աշխատում են կոլտնտեսային արտադրության մեջ։ 17 ստանիցաներում կուսակցության մեջ

թողնված 312 կոլտնտեսականներից 264-ը վոչ մէ-  
կուստուց չստացան: Նրանք իրոք հանդիսանում են  
առաջավար մասը գյուղում, սակայն նրանց աճումը մի-  
շաբաք ըջիջներում արդելակվել ե անճիշտ ղեկավա-  
րությամբ, նրանց ուժերն ոգտագործելու անկարողու-  
թյամբ:

ՀԱՅՈՒԹ

Հյուսիսային Կովկասի գյուղական կազմակերպու-  
թյունների զաման հայտաբերած փաստերն ի մի ամ-  
փոփելով, մենք պետք ե ասենք, վոր նրանք ցուց  
են տալիս, վոր շրջանային կոմիտեները և վերահսկիչ  
հանձնաժողովները մի շարք ղեղքերում հանդեմ չեն  
յնկել վորպես կոլտնտեսությունների և խորհանտեսու-  
թյունների կլանքի ղեկավարներ: Նրանցից վոսանք  
իրենց աշխատանքներում թույլ են տվելաշ-ոպորտու-  
նիստական սխալներ, իսկ Շե-ից և ՇՎՀ-ից շատերը  
չդիտելին, թե ակտիվի ինչ կադրեր են աշխատում  
գյուղում, չեն հսկել նրանց: Հաճախ Հյուսիսային Կով-  
կասի կուսակցական կազմակերպությունները և առանձ-  
նապես վերահսկիչ որդանները նախքան գտումը  
ձեռք չեն առել իսկական բայլեսիլլան միջոցներ մեր-  
կացնելու համար կուսակցական շարքերը մուտք-  
դործած՝ կոմունիզմի գործին խորթ մարդկանց, գըր-  
պանում կուսառմու ունեցող կուլակային ազիտառոր-  
ներին, նրանց, վորոնք տեղերում գործում են մեր  
դեմ: Թուլացրել են հեղափոխական աշալընությունը  
գասակարգային թշնամու նկատմամբ և պալքար չեն-  
մղել կոլտնտեսությունները թշնամական, խորթ տար-



բերից մաքրելու համար։ Այդ պատճառով մի շաբթ  
կոլտնտեսություններում զեկավարության մեջ գըտ-  
նավեցին կուլակներ։

Զաման խնդիրն ե նախ և առաջ մաքրել կուսակ-  
ցությունը խորթ, այլասերված մարդկանցից, ինչպես  
և նրանցից, վորոնք ընդունակ չեն վարել կուսակցու-  
թյան գիծը, չգիտեն մեր կուսակցության քաղաքա-  
կանության հիմունքները և չեն ուղում զբաղվել ինք-  
նակրթությամբ։

Կարեսը ե նույնպես, վոր զտման ընթացքում կուս-  
որգաններն ուսումնասիրեն կուսակցական ըջիջների  
աշխատանքը և բարելավեն նրանց ամենորյա ղե-  
կավարությունը, հայտաբերեն և վերացնեն կուսակցու-  
թյան մեջ խորթ, թշնամի տարրերի թափանցման պատ-  
ճառները և ապահովեն կուսակցական ուժերի ճիշ-  
դասավորումը գործնական աշխատանքի մեջ։ Այս ա-  
մենը կհամախմբի կոլտնտեսության լայն մասսաները  
կուսակցության շուրջը՝ կոլտնտեսությունների ամ-  
բուազնդման համար, ընդդեմ կաւլակի, կուժեղացնի  
բայլերիկան ազդեցությունը կոլանտեսություններում։

Այս խնդիրներն իրագործելու համար անհրաժեշտ ե,  
մեր կարծիքով, յելնելով Հյուսիսային կովկասում կա-  
տարված զտման առաջին փորձից, հատուկ ուշադրու-  
թյուն դարձնել հետևյալ հանգամանքների վրա։ առա-  
ջին, զման հանձնածովովների մանրակրիտ բնօրու-  
թյունը։ Հանձնածովովների անդամ պետք ե ընտրել  
կուսակցականուրեն կալուն ընկերների, վորոնք լով-  
ուատրասոված են քաղաքականագես, վորոնք ստուգված

են, ուստի քաղաքական և դործնական աշխատանքի փորձառությունն Միայն այս դեպքում նրանք կկարողանան ստուգել լուրաքանչյուր կոմունիստի քաղաքական մակարդակը և միննույն ժամանակ ոգնել կուսակցության մեջ հետ մնացող կոմունիստներին և անկուտակցական ակտիվիստներին՝ լավ հիմքերի վրա դնելու դործնական աշխատանքը կոլտնտեսություններում:

Հայտաբերել և մերկացնել մեր կուսակցության համար խորթ մարդկանց՝ ամեններն հեշտ գործ չեն: Ալդապահանջում և բայլզենիկան կոփվածությունն, կարողությունն և կուսակցության փորձ: Դասակարգալին թշնամին, մուտք գործելով կուսակցության մեջ, խորսամանկ և ճարպիկ կերպով հարմարվում են, ծածկում են ակտիվիստին դիմակը, խցկվում են կոլտնտեսությունների, խորհութանությունների մեջ վորպես ստանու մարդք:

Ամենափոքր անուշադրությունը զտման հանձնաժողովների ընտրության մեջ — յերբ ընտրվում են այնպիսի ընկերներ, վորոնք վոչ միշտ համապատասխանում են կուսակցության գահանջներին, քաղաքականագետ լավ պատրաստված չեն, — ունենում են այն հետեանքը, վոր հարկ ելինում ուղղել և լրացնել հանձնաժողովի աշխատանքը:

Զեման հաջող կատարման յերկրորդ պայմանը, ինչպես ցույց ետալիս Հյուսիսային կովկասի փորձը, հանդիսանում են այն, վոր նրան պետք են մասնակցեն տեղական կուսակցական կազմակերպությունները յեվ ոչ ուղանենքը.

Հյուսիսային կովկասում զտժան հանձնաժողով-ները նկատում ելին, վոր շրջկոմիներից և ՇՎՀ-ից շատերը, նույնիսկ բջիջների ղեկավարներ, չգիտեն, թե ովքեր են գյուղի կոմունիստները, ինչ աշխատանք են տանում գյուղական կազմակերպությունները։ Շըրջկոմները և ՇՎՀ հաճախ չելին ճանաչում գյուղական ակտիվին, չելին կարողանում ցուց տալ դրական և բացասական որինակներ բջիջների աշխատանքից։ Այդ պատճառով զտժան հանձնաժողովները լերընին իվիճակի չեցին արագորեն կողմորոշվել տեղական պայմաններում և հաճախ հանդիպում ելին «դավադիր լոռության», մանավանդ զտժան սկզբում, կոմունիստների դժկամությանը՝ հայտաբերելու բջիջների թերությունները և խոսելու իրար մասին։

Որինակ, Պլաստունովսկայա ստանիցալի բջիջում շրջկոլտնտեսության նախկին նախագահ ընկ. Յարեվակին հանդես գալով զտժան նիստում՝ հալարտությամբ հայտարարեց, վոր շրջանը ցանքի ասպարեզում բռնում ե լերընը տեղը լերկըում, վորի համար ստացել ե փոխանցիկ դրոշը։ Ներկա լեղող կոմունիստներից վոչ մեկը չմերկացրեց Յարեվսկու աշխակապությունը։ Իսկ հանձնաժողովը հայտաբերեց, վոր շրջանը հացահատիկ ցանել ե միայն նորմալի կեսը ամեն մի հեկտարին, և շատ տեղերում մնացել են 10—30 հեկտար չցանված տարածություններ։

Ցեղ այս կապահցությամբ պետք ե նշել Հյուսիսային կովկասի լերկրային կութայելի կազմից զտժան հանձնաժողովներին ցույց տրված ոգնուրյան դրական փարձը։ Ցեղկը կումը զտժան վայրերն եք ուղարկում կազմկուսխմբեր մարզսիզմ-լենինիզմի դասընթացների ունկնդիրներից։ Ամբերը հանձնաժողովների հետ միա-

այն ուսումնասիրում ելին ըջիչների և տռանձին կոմունիստների գործնական աշխատանքը, կուսակցական-քաղաքական դաստիարակությունը ըջիչներում, ակտիվի մեջ կատարվող աշխատանքը և այլն։ Դրս շնորհիվ խմբերն ոգնեցին զաման հանձնաժողովներին լեռնան հանելը ջիջների թերությունները, դրանց մասին պատմել զամանը նվերված կուսակցական ժողովներում, միաժամանակ ցուլց տալ առաջավոր կոմունիստների լավագույն փորձը։

Անա որինակներ խմբերի աշխատանքից։ Կուբուզանենսիկի շրջանի Զամլիկսկայա ստանիցայում խումբը նախքան զառւմը ժողովներ կազմակերպեց բրիգադներում և կոլտնաեսություններում, բացատրեց զաման խնդիրները, ուսումնասիրեց կուսակցական ուժերի դասավորությունն ըստ բրիգադների, կազմակերպեց գողացված հացը վորոնող հատուկ բրիգադներ։ Վաղնեսնենսիկայա ստանիցայում խումբը վերականգնեց միանդամայն անգործության մատնված կուսուսավորության ցանցը, ընտրեց դպրոցների և խմբակների ղեկավարներ, հրահանդեց նըանց, դպրոցական պարապմունքներ կազմակերպեց հինգ կոլտնաեսություններում։ Կազմակերպվեց 13 բրիգադ, վորոնց մասնակցում ելին 62 մարդ՝ դողագված։ հացը գտնելու համար։

Կոմունիստների ստուգման ժամանակ էերեաց, վորչի կարելի հիմնվել կուսակցության շրջկոմում լեղած անկետային տվյալների վրա։ Զտման հանձնաժողովներից շատերը գործ ունեցան այնպիսի փաստերի հետ, չերք դուզված խորթ մարդկանց մեծամասնությունն անկետաներում թագցրել եր իր անցլալը։ Զտման հանձնաժողովները մած դժվարությամբ միայն կարո-

ղանում եյին հայտաբերել կեղծ կոմունիստի դեմքը՝  
հենվելով խմբերի և նվիրված կոմունիստների աշխա-  
տանքի վրա:

Սխալ կլինի կարծել, թե մենակ կուսակցության շար-  
քերի զտումով մենք կկարողանանք բարելավել ստուգ-  
ված բջիջների աշխատանքը։ Անհրաժեշտ ե իսկույն  
ենթ դնել նոր մարդկանց, իսկ դրա համար պահանջ-  
վում ե մեծ աշխատանք ակտիվ հայտաբերելու և յեր-  
բեմն նոր ակտիվ ստեղծելու համար, ինչպես այդ յե-  
ղավ շատ անգամ Հյուսիսային Կովկասում։ Յեզ այս  
դժվար ու անհրաժեշտ աշխատանքում մեծ ոգնու-  
թյուն ցույց տվին այդ խմբերը։

Հաճախ բջիջում հետ ելին քշում լավագույն, առա-  
ջավոր կոլտնտեսականներին և բանվորներին, առաջ  
չերին քաշում նրանց։ Խմբերը տեղերում ոգնում ելին  
հայտաբերելու աշխատողների ռեզերվներ զտվածներին  
փոխարինելու համար։ Բելոգլինսկու շրջանում շրջա-  
նային կուսակտիվից ստորին կուսաշխատանքի համար  
ջոկվեց 20 մարդ, խորհրդային, կոլտնտեսական և կո-  
ոպերատիվ աշխատանքի համար՝ 20 մարդ։

Հյուսիսային Կովկասի յերկրկոմն իր մոտ ստեղծեց  
նաև աշխատողների մի խումբ՝ տեղերն ուղարկելու հա-  
մար՝ փոխարինելու զտված, հեռացված, թույլ  
կանց։

Զտման արդյունքներն այնքան ավելի նշանակալից  
կլինեն, վորքան ավելի մեծ ուշադրություն կդար-  
ձընենք մենք կաղըեր պատրաստելու հարցերին՝ կու-  
սակցությունից զտվածներին փոխարինելու և ստուգ-  
ված կուսակազմակերպությունների աշխատանքը կա-  
նոնավորելու համար։

Վերեռում ասվածներից լերեռում եւ, թե ինչ հսկայական դեր պետք է կատարեն զտման մեջ և ինչ մեծ ողնություն պարտավոր են ցուց տալ զտման հանձնաժողովներին շրջկոմիները և շբջ. Վ.Հ. Մինչդեռ շըրջկոմիների մեծամասնությունը, չնայած վերտպաս որդանների ցուցումներին, անուշադիր կերպով են ընտրում զտման հանձնաժողովի անդամ ընկերներին, չեն վերացնում զտման հետևանքով հայտարերված բացերը։ Սա սխալ վերաբերմունք է զեպի զտումը, նրա նշանակության թերապնահատում։ Զտումն ամբողջ կուսակցության գործն եւ Շրջանալին կազմակերպությունները զտման վրա սկսութ և նաևեն վորպես իրենց աշխատանքի, իրենց զեկավարության ամենախոր սաստցման և ինքնաստուգման վրա, պետք է տեղինուանդուն ուսումնասիրեն հայտարերված թերությունները, վորպեսզի սովորեն բազուկիկան զեկավարության մեթոդները, կօնկրետ կերպով իմանան յուրաքանչյուր շբջանի, յուրաքանչյուր կոլտնտեսության, խորհունտեսության պահանջները, կարիքները և առանձնահատկությունները։

Կուսակցական կոմիտեների խնդիրն եւ ամենառաջադիր կերպով զտման հանձնաժողովի անդամ ընտրել ախողիսի ընկերների, վորոնք մաքրելով թիջները կուսակցությանը խորթ, ազատաբաժան տարբերից՝ միաժամանակ կտրողանան գործնական ոգնություն ցույց տալ բջիջներին՝ կարգավորելու նրանց աշխատանքը կորանակառության, խորհունտեսության, ձեռնարկության մեջ, բարելավելու կուսակցասիարակչական և մասսական աշխատանքը։

Հլուսիսային կովկասի փորձը՝ զտման հանձնաժողովներին և բջիջներին ոգնելու համար խմբեր ուղարկելու գծով, տեղերում աշխատողների նոր կադրեր հայտաբերելու համար, ամենաթույլ կազմակերպություններն ամրապնդելու նպատակով աշխատողների ռեզերվ ստեղծելու փորձը պետք ե վերցնեն և կիրառեն բոլոր կուսակցական կոմիտեները։ Պետք ե հիշել, վոր առանց նման ոգնություն ցույց տալու զտման հանձնաժողովներին՝ կուսակոմիտեներն անհարող կիւնեն ամրացնել զտման արդյունքները, վօրին պետք ե ընկերակցի կուսակցական աշխատանքի ուժեղացումը, բջիջների ղեկավարության բարելավումը, պլանների և պետության հանդեպ լեղած պարտավորությունների կատարուածը լիովին և ժամանակին։

Վերահսկիչ հանձնաժողովները զտման դասերից պետք ե տեսնեն իրենց աշխատանքի մեթոդների անկատարությունները, վերահսկողության բացակալությունը, ձեական մոտեցումը ղեպի վերահսկողությունը, կտրվածությունը մասսաներից։ Պետք ե գործի ընթացքում վերակառուցեն իրենց աշխատանքը, կազմեն մասսաների հետ, ամրապնդեն իրենց մասսայական կազմակերպությունները տեղերում։

Զեման հաջող կատարման կարելոր մի պայման և տեղական մամուլի մասնակցությունը, Սակայն պետք ե հիշել վոր տեղական թերթերն առայժմ թույլ հն մասնակցում զտմանը։ Բավական չե սահմանափակվել հրապարակելով վտարվածների անռւնները, լուսաբանելով հայտաբերված փաստերը։ Մամուլի խնդիրն ե դրս հետ միասին ցույց տալ, թե ինչպես պետք ե

աշխատեն բջիջները, հարութերեն առանձին կոմունիստների աշխատանքի դրական փորձը, վորից սկսած որինակ վերցնել:


Հյուսիսային կովկասում, չնայած նախկին կուսակցական գտութերին, վորոնք սկսվում եյին ղեկավար կազմի ստուգումից, գտութեն սկսվեց ստորին կուսկաղմակերպությաններից: Ալդ հնարավորություն տվեց զտման ընթացքում՝ բջիջները խորթ, վոչ-կոմունիստական տարրերից մաքրելու հետ միասին, պարզել շրջկոմիների կողմից կոլտնտեսություններին և խորհանական տարրերին ցույց տրված ղեկավարության գրությունը: Մենք գիտենք, վոր զտման ընթացքում կլինեն առանձին սխալներ, թերություններ, և մենք պարտավոր ենք շտեկել դրանք, սակայն միաժամանակ մենք միշտ պետք են հիշենք, վոր մեր հիմնական խընդիրն եւ աղատել կուսակցությունը վոչ-կոմունիստական, յերերպող տարրերից, ամրապնդել կուսակցական դիոցիպլինան, բարձրացնել կուսկաղմակերպությունների և լուրաքանչյուր կոմունիստի մեծագույն պատասխանատվության գիտակցությունը նրանց հանձնարարված գործի համար: Թող կուսակցական բջիջները քիչ լինեն թվով, բայց ավելի կայուն, ավելի անհեղին լիովին նվիրված կոմունիզմի գործին: լավ իմանան իրենց խնդիրները:

Կուսակցական ըոլոր կազմակերպությունների խընդիրն եւ հաշվի առնել Հյուսիսային կովկասում կատարված զտման առաջին դասերը: Զտուժը կուսակցական ըոլոր կազմակերպությունների, ըոլոր կուսկոմիտեների, առաջին հերթին լիրկբային (մարդարային) և շըրջանային կուսակցական որդանների գործն եւ: Զտու-

մը հասնում ե իր նպատակին միայն այն դեպքում,  
յեթե նրա խնդիրները կլուրացվեն և ճիշտ կերպով  
կիրագործվեն բոլոր կուսակցական կազմակերպու-  
թյունների կողմից՝ իրենց առաջիկա մեծ և պատաս-  
խանատու աշխատանքում:

Ամեն մի կոմունիստ պետք է դառնա իսկական  
կազմակերպիչ, վոր առաջնորդում ե մասսաները, ար-  
ժանավոր ներկայացուցիչ բանվոր դասակարգի ավան-  
դարդի, արժանի՝ լենինյան կուսակցության անդամի  
բարձր կոչման:







ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0039659

(054)

Գյուղը 20 կ.

A — I  
4533



Մ. Շկիրյատօս

Կ ի շ է ք չ պ ա ր տ ի չ

Издательство ЦККП (б) А

Партиздат 1933 Երևան